ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՈ/65-2021.
„17„ 03 2021թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N ՄՈ/21-2021 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի պահանջներով

Որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2021թվականի հունվարի 27-ի ««Վեդու բժշկական կենտրոն» և «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը, ընկերությունների հաշվապահական հաշվեկշիռները ,գույքի, այլ գույքային իրավունքների և պարտավորությունների «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը և ընկերությունների տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկման կարգը հաստատելու մասին» N ՄՈ /21-2021 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝ 4-րդ կետից մինչև 8-րդ կետը ներառյալ շարադրել նոր խմբագրությամբ և որոշման մեջ լրացնել 9-րդ,10-րդ և 11-րդ կետերը.

1. 4-րդ կետով հաստատել«Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության զուտ ակտիվների մեծությունը 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ 289135300(երկու հարյուր ութսունինը միլիոն մեկ հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամի չափով և ընկերության կողմից տեղաբաշխված մեկ հատ 40000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական)անվանական ոչ փաստատղթային բաժնետոմսի հաշվեկշռային սկզբունքով հաշվարկված շուկայական արժեքը 619134 (վեց հարյուր տասնինը հազար մեկ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. 5-րդ կետով հաստատել «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության զուտ ակտիվների մեծությունը 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ 50089600 (հիսուն միլիոն ութսունինը հազար վեց հարյուր)

Հայաստանի Հանրապետության դրամի չափով և ընկերության կողմից տեղաբաշխված մեկ հատ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսի հաշվեկշռային սկզբունքով հաշվարկված շուկայական արժեքը 65477 (վաթսունհինգ հազար չորս հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

3. 6-րդ կետով հաստատել «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության միացման միջոցով վերակազմակերպման հետևյալ կարգն ու պայմանները.

«Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և «Վեդու ծննդատուն» ՝ փակ բաժնետիրական ընկերության միացման պետական գրանցումից հետո մեկամսյա ժամկետում Ընկերությունների կողմից կազմված և Ընկերությունների պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված փոխանցման ակտի համաձայն Ընդլայնվող ընկերությունն ընդունում է Միացող ընկերության առկա հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը,հաշվարկները,այլ գույքային իրավունքները:

Հանձնում –ընդունումը կատարվում է համապատասխան ակտերի միջոցով, որոնք ստորագրվում են կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից և ենթակա են հաստատման Արարատի մարզպետի կողմից:

Միացվող ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերը փոխարկվում են «Վեդու բժշկական կենտրոն » փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առանց ձևի և սեփականատիրոջ փոփոխության սույն որոշման 8-րդ կետում սահմանված փոխարկման կարգի համաձայն և բաժնետերերի ռեեստրում համապատասխան գրառում կատարելու միջոցով:

«Վեդու ծննդատուն» և «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպված են համարվում միացման արդյունքում «Վեդուծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարման պետական գրանցման պահից:

4. 7-րդ կետով հաստատել «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության գույքի , այլ գույքային իրավունքների և պարտավորությունների «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը:

5. Հիմք ընդունելով «Վեդու բժշկական կենտրոն» և «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերությունների միջև կնքված պայմանագիրը, 8-րդ կետով հաստատել «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի հետևյալ փոխարկման կարգը «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի . «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված թվով 765 (յոթ հարյուր վաթսունհինգ) հատ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային ձևի բաժնետոմսերը փոխարկվում են «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության $\left[ԶԱ2 \times \left(\frac{ԲՔ}{ԶԱ1}\right)\right]$ հատ 40000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսերի, որտեղ ԶԱ1 և ԶԱ2 «Վեդու բժշկական

կենտրոն» և «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերությունների զուտ ակտիվների մեծություններն են , ԲՔ-ն «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի քանակն է, իսկ միջակ [և] փակագծերը առանձնացնում են նրանց մեջ ամփոփված թվի ամբողջ մասը:

6. 9-րդ կետով լրացնել և հաստատել բաժնետոմսերի փոխարկման արդյունքները՝

՝«Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված թվով 547(հինգ հարյուր քառասունյոթ) հատ 40000(քառասուն հազար)Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր, իսկ 36110 (երեսունվեց հազար մեկ հարյուր տաս)Հայաստանի Հանրապետության դրամը հանդիսանում է որպես էմիսիոն եկամուտ:

7. 10-րդ կետով լրացնել և սահմանել «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը 21 880 000 (քսանմեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 547 հատ 40000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

8. 11-րդ կետով լրացնել և հաստատել «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը:

17.03.2021

X

ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN RAZMIK 2008610616 Ռ.ԹԵՎՈՆՅԱՆ